8509

# ԸՆԴՀԱՆՈՒՐ
# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

*ԿՆՔՎԱԾ*

Հ. Ս. Խ. Հ. ՁԱԿՄԵԴԿՈՄԲԻՆԱՏԻ ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒ-ԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ, 1931 ԹՎԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԵՎԱՆ
1931

331·11:671
Ա-89
12853-58
14887-57

# ԸՆԴՀԱՆՈՒՐ

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿՆՔՎԱԾ

Հ. Ս. Խ. Հ. ԶԱԿՄԵԴԿՈՄԲԻՆԱՏԻ ԱԼԱՀՎԵՐԴՈՒ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ, 1931 ԹՎԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
Պատվեր 2833
Գլավլիտ 6513 (բ)
Տիրաժ 400

29981-Աւ.Հ.

12853-58

2001

Տոմարագրված է Ալլահ-
վերդու Աշխատանքի կող-
մից 1931 թվի փետրվա-
րի 7-ին, № 3-ի տակ։

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սույն հավաքական պայմանագիրը կնքված է Զակմեդկոմբինատի Ալլահվերդու ձեռնարկության գործարկոմի հանձինս նրա նախագահ Ս. ԹԱԹՈՅԱՆԻ մի կողմից և նույն ձեռնարկության վարչության հանձինս նրա դիրեկտորի տեղակալ Լ. ՂԱԶԱՐՅԱՆԻ միջև մյուս կողմից, որոնցից առաջինը հետագայում կոչվելու է Գործարկոմ, իսկ երկրորդը Վարչություն։

## Ա. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏՖԻՆՊԼԱՆԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Սույն հավաքական պայմանագրի հիմնական խնդիրն է ապահովել բանվոր դասակարգի առաջ դրած տնտեսական առաջադրությունների բարեհաջող իրագործումն— ժա-

գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության վերաշինման ասպարեզում, ապահովելով հնգամյակի իրագործումը 4 տարում—զարկ տալ բանվոր դասակարգի նյութական և կուլտուր կենցաղային դրությունը հետագա անշեղ բարելավման գործին:

2. Յելնելով վերոհիշյալից, Զակմեդ-կոմբինատի ձեռնարկությունների բոլոր բանվորությունը, գործարկոմը, վարչությունը, ճարտարա-տեխնիկական կազմը և ծառայողները իրենց վրա յեն վերցնում 1931 թվի արդֆինպլանի քանակային և վորակային ցուցանիշները, ինչպես և բանվորության կողմից առաջադրված և տնտ. մարմինների կողմից ընդունված հանդիպական արդֆինպլանից բխող առաջարկների լիակատար կատարման պարտավորությունը:

3. Հավաքական պայմանագրի ստորագրող կողմերը պարտավորվում են հիշյալ առաջադրումները իրագործել՝

ա) Արտադրության պրոցեսների ճշգրիտ կազմակերպման, սոցիալիստական ռացիոնալիզացման, պրոլետարական աշխատանքային կարգապահության ամրացման և աշխատանքի կազմակերպման կոմունիստական մեթոդների միջոցով:

բ) Աշխատանքի կազմակերպման հարվածային ձևերի, այն է՝ սոցիալիստական մրցության և հարվածայնության ծավալման միջոցով:

գ) Մետաղի, վառելանյութերի ելեքտրո-էներգիայի, հումույթի, նյութերի և կիսաֆաբրիկատների օգտագործման մեջ, տնտեսական խիստ ռեժիմ սահմանելը:

դ) Ներքին միջոցների առավելագույն հայտաբերման և օգտագործման ինչպես և կահավորման ու տեղակայանների տեխնիկական ունակության լրիվ շահագործման միջոցով:

ե) Դազգյահներին, մեքենաներին և գործիքներին խնայողաբար վերաբերվելու, լի-ակատար օգտագործելու միջոցով և

զ) Անխափան պայքարելով արտադրանքի որակի բարելավման համար

4. Պայմանավորվող յերկու կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցներ 1931 թվի արտադրանքի ծրագիրը, աշխատանքի արտադրողականությունը, աշխատավարձի բարձրացումը և ինքնարժեքի իջեցումը լրիվ չափով կատարել, համաձայն ներքոհիշյալ աղյուսակի:

| | Չափանիշ | Փաստորեն կատարված 1930 թ. | Պետք է կատարված լինի 1931 թ. | 1930 թ. աճումը տոկոս 1930 թ. վերաբերմամբ |
|---|---|---|---|---|
| 1. Սևապղինձ . . . . . | Տոնն | 2084,2 | 3200 | ավ. 53,5 |
| 2. Գործարանում զբաղված յուրաքանչյուր բանվորի աշխատանքի տարեկան միջին արտադրողականությունը 1926/27 թ. անփոփոխ գներ. (2 տոնն սևապղինձը հավասար է 1050 ռուբ կոպ.) . . . . | ռ. կ. | 5492—40 | 8000 | ավ. 45,6 |
| 3. Գործարանում զբաղված բանվորների ընդհանուր թիվը . . . . . | անձ | 400 | 420 | ավ. 5, |
| 4. Մեկ բանվորի տարեկան միջին աշխատավարձը . | ռուբլի | 830 | 830 | — |
| 5. Մեկ տոնն սև պղնձի ինքնարժեքը . . . . | ռ. կ. | 1017—34 | 866—34 | իջեց. 14,8 |

5. Գործարանում զբաղված բանվորների կազմի մեջ մտնում են պղնձաձուլարանի մեխանիկական ելեկտրո-ցեխերի, առևտրական և կոմունալ բաժինների—հաշված գործարանային գումակի բանվորները:

Վարչությունը պարտավորվում է՝

ա) Ստեղծել արտադրական բոլոր անհրաժեշտ պայմանները, վորոնք կապահովեն արտադրության աճումն արդֆինպլանով նախատեսված չափով:

բ) Պայմնագրի ստորագրման պահից 25 որվա ժամանակամիջոցում արդֆինպլանը հասցնել ցեխերին:

գ) Յուրաքանչյուր տասնորյակը (դեկադ) մեկ անգամ ներկայացնել գործարկոմին ու միության հանրապետական կոմիտեյի արդֆինպլանի քանակային և վորակային ցուցանիշների իրագործման մասին ձեռնարկի և նրա ցեխերի կողմից:

դ) Ցեխերի բանվորների հաջորդ ամսվա ծրագրային ցուցանիշների հետ ծանոթացնելու նպատակով վոչ ուշ քան յուրաքանչյուր նախորդ ամսվա 28-ը տալ ցեխերին արտադրական առաջադրությունները (հաջորդ ամսվա արտադրական ծրագիրը):

ե) Արդֆինծրագրով նախատեսված ռացիոնալացման ձեռնարկումների կատարման հետ միասին անպայմանորեն կիրառել նաև բանվորների ճարտարա-տեխնիկական և այլ աշխատակիցների արտադրության պրոցեսների բարելավմանը վերաբերվող ու փորձության կողմից ընդունված բոլոր առաջարկությունները.

զ) Կորուստները խոտանը (բրակ) ու ցածր որակի արտադրանքը կանխելու նպատակով, կազմակերպել ծրագրային պայքար ու այդ նպատակի համար ցեխերում հատուկ անձանց միջոցով տեխնիկական վերահսկողություն սահմանել:

է) Սոցմրցման և հարվածայնության ծավալման և ամրապնդման գծերին կազմակերպչական-տեխնիկական օժանդակություն ցույց տալ, ամեն կերպ օժանդակել աշխատանքի կազմակերպման նորանոր ձևերի (հարվածային բրիգադաներ, օրինակելի արտադրանքի բրիգադաներ, ձեպընթաց բրիգադաներ, ծրագրային խմբակներ և այլն) տարածմանը և սոցմրցման ու հարվածայնության արդյունքների մշտանջյա հաշվառումն կազմակերպել ու այդ խնդրում տեղյակ պահել—գործարկոմին միության հանրապետության կոմիտեյին: Ամեն անգամ



արդֆինպլանի կենսագործման առթիվ վերջիններից տեղեկանք տալու պահին նաև իրազեկ անել սոց. մրցման ու հարվածայնության արդյունքների մասին:

ը) Ամբողջապես իրագործել աշխատավարձի կարգավորման և աշխատանքի պաշտպանության սույն պայմանագրով նախատեսված խնդիրները, ամեն կերպ օժանդակելով բանվորների սննդի, ինչպես նաև բնակարանային ու կուլտ-կենցաղային կարիքների բարելավման գործում:

թ) Ամեն ջանք գործ դնել կենսագործելու արտադրության պրոցեսների ռացիոնալացման, բանվորների ռացիոնալ օգտագործման, արտադրողականության բարձրացման ու տեխնիկական չափավորման առավելագույն հնարավոր միջոցները:

6. Իրենց հերթին բանվորներն ու ծառայողները պարտավորվում են՝

ա) Ամբողջապես լիկվիդացիայի ենթարկել առանց հարգելի պատճառների տեղի ունեցող պրոգուլները առավելագույն չափով օգտագործել բանվորական օրը, ամեն կերպ զարկ տալ ծրագրերի կատարման և գերակատարման և բարելավել արտադրանքի որակը:

բ) Խնամքով վերաբերվել դեպի կահույքը

և գործիքները, տնտեսել հումույթը, նյութերն ու կիսաֆաբրիկատները և վոչ մի կերպ թույլ չտալ բանուժի, հումույթի, նյութերի և այլ վերաբերյալ սահմանած սպառման նորմաները գերազանցել:

գ) Ամեն կերպ ուժանդակել արտադրանքի, վորակի բարձրացմանը և խոտանի վերացմանը աշխատանքին բարեխղճորեն վերաբերվելով, փոխադարձ ինքնահսկողություն սահմանելու միջոցով:

դ) Վարչության բոլոր ցուցմունքները ճշգրիտ և ժամանակին կատարել և այդպիսով ուժանդակել միանձնյա ղեկավարության ամրապնդմանը:

ե) Սիստեմատիկորեն բարձրացնել յուր վորակը, կանոնավոր հաճախելով պոլիտեխնիկական դասընթացքները, դպրոցները, մասնակցելով խմբակային աշխատանքներին:

զ) Անդադրմանորեն պահպանել ներքին կարգապահության կանոնները և ուժանդակել ձեռնարկության ներքին սանիտարական դրության բարելավման գործին:

7. Գործարկոմը պարտավորվում է.—

ա) Վճռականապես ամրացնել աշխատանքային կարգապահությունը, ակտիվորեն պայքարել գործալիքների, կորգողների և



աշխատանքային կարգապահության ամեն տեսակի խախտումների դեմ, ինչպես և բանվորական ուժի հոսունության դեմ:

բ) Սիստեմատիկ հսկողություն սահմանել արդֆինպլանի քանակային և վորակային ցուցանիշների կենսագործման վրա, մոբիլիզացիայի յենթարկելով ամբողջ բանվորներին և ծառայողներին արդֆինպլանի բոլոր ցուցանիշները իրագործելու՝ սոց. մրցման, հարվածայնության, գյուտարարության և արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ծավալման և ամրապնդման միջոցով:

գ) Վարչության հետ միասին բանվորներին իրազեկ պահել արտադրական հանձնարարությունների կիրառման ընթացքի, ինչպես նաև սոցիալիստական մրցության և հարվածայնության արդյունքների մասին, ցույց տալ վարչությանը անհրաժեշտ ուժանդակություն մնացող խմբերի աշխատանքների ուժեղացմնա և արդֆինպլանի կիրառման հետ կապված դժվարությունների վերացման գործում:

դ) Հավաքական պայմանագրից բխող կողմերի պարտավորությունների կենսագործման ընթացքը, ամենորյա հսկողության յենթարկել և կազմակերպել այդ ստ-

թիվ մասսայական ստուգումն, գործադրե-
լով միաժամանակ հասարակական ներգործ-
ման բոլոր միջոցները այն կողմի կամ առան-
ձին անհատների նկատմամբ, վորոնք չեն կա-
տարում իրենց վրա վերցրած պարտավորու-
թյունները: Հավաքական պայմանագրի ի-
րագործումն ստուգել յուրաքանչյուր յերեք
ամիսը մեկ անգամ:

8. Կողմերը պարտավորվում են՝ բոլոր
այն դեպքերում, յերբ վորևե վտանգ սպառ-
նա արտադրական ծրագրի բխող հանձ-
նարարությունների իրագործմանը, միա-
սին կոնկրետ ձեռնարկումներ մշակել վե-
րացնելու բոլոր դժվարությունները և ա-
պահովելու արդ-ֆինպլանի կենսագործումն:

## Բ. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱ-ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Գործարանային վարչությունը պար-
տավորվում է վոչ ուշ քան 10 որվա ընթաց-
քում քննության առնել արտադրական խոր-
հրդակցությունների և առանձին անհատ-
ների առաջարկները, և վերջիններիս հեղի-
նակներին հայտնել քննության արդյունք-
ները:



10. Վարչությունը պարտավորվում է
մինչև 1931 թվի փետրվարի 15-ը հարվա-
ծային բրիգադների և մրցողների աշխա-
տանքների նկատմամբ հատուկ հաշվա-
ռումն սահմանել:

11. Վարչությունը պարտավորվում է
սոցիալիստական մրցության ֆոնդերի հաշ-
վին պարգևատրել լավագույն հարվածա-
յիններին, ճարտարատեխնիկական աշխա-
տավորներին, հարվածային բրիգադներին,
արտադրական կոլեկտիվներին և այլն—
պլանային հանձնարարությունների վորա-
կային և քանակական ցուցանիշների գերա-
զանցման, ինչպես նաև սոցմրցման և աշ-
խատանքի կազմակերպման նորանոր ձևերի
ծավալման ասպարեզում հայտաբերված
նախաձեռնությունների համար: Խմբակա-
յին պարգևատրությունը կատարվում է վոչ
ավել քան մեկ անգամ—յեռամսյակի ըն-
թացքում:

Միաժամանակ վարչությունը պարտա-
վորվում է՝ առաջարկության կամ գյուտի
ընդունելու որից մեկ ամսյա ժամկետում—
սահմանել նրա տնտեսական եֆեկտը, և
պարգևատրել հեղինակներին, համաձայն
ՀԱՄԽ-ի և ԺՏԳԽ-ի այդ առթիվ հրատա-
րակած կանոնադրության:

12. Վարչությունը պարտավորված է էքսպերտիզացիայի միջոցով ժամանակին քննել, հաշվի առնել և ռեալիզացիայի ենթարկել բանվորների առաջարկությունները, կատարելագործումները և գյուտերը, կազմակերպելով այդ նպատակի համար տեխնիկական կոնսուլտացիա:

13. Վարչությունը պարտավորվում է մեկ ամսվա ընթացքում համաձայն գոյություն ունեցող կարգի համաձայնեցնել գործարկոմի հետ արտադրական խորհրդակցությունների ցեխային կազմակերպիչների, ցեխերի պետերի օգնականների (բանվորական առաջարկությունների գործով) նշանակելու խնդիրը:

14. Գործարկոմը պարտավորվում է՝

ա) Հարվածային բրիգադների կազմակերպիչների աշխատանքները սիստեմատիկորեն ղեկավարել և տանել նրանց նկատմամբ հրահանգչական աշխատանք:

բ) ՃՏՍ-ի կողմից մրցող բանվորներին և հարվածային բրիգադներին ցուցադրվող օժանդակությունը դնել կազմակերպված հիմքերի վրա:

գ) Արտադրական խմբակային խորհրդակցություններ կազմակերպել և ապահովել վերջիններիս մեջ բանվորների, ՃՏ. աշ-



խատակիցների և վարչության լայն մասնակցությունը:

Բանվորները և ՃՏ. աշխատավորներն իր հերթին պարտավորվում են ակտիվ մասնակցություն ցույց տալ յուր ցեխերին ու խմբակների արտադրական խորհրդակցությունների մեջ, և զարկ տալ արտադրության ռացիոնալացման և արտադրական հանձնարարությունների լավագույն կիրառման նպատակով կազմակերպվելիք անհատական և խմբակային մրցությանը:

## Գ. ԿԱԴՐԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

15. Վարչությունը պարտավորվում է՝ Ֆաբ. գործ. ուսի շենքի կառուցման, ինչպես և Ֆաբ. գործ. ուսի պահպանման համար 1931 թվի արդ. Ֆին. պլանով նախատեսված գումարները լրիվ օգտագործել իր անմիջական նպատակին, բաց փորում, Ֆաբ. գործ. ուսում սովորող ու նոր ընդունվող աշակերտների թվի 25 %-ը ավել լինեն մետաղագործներ:

16. Ֆաբ. գործ. ուսում և մասսայական արհեստների դպրոցներում ուսանող աշակերտները, ինչպես և փորձի բարձրացման դանադան դասընթացներում սովորող բանվորները պարտավոր են վարչության հետ կըն-

քել հատուկ պայմանագրեր—տվյալ ձեռնարկի մեջ վորոշ ժամանակ աշխատել—ուսուցման ժամկետի և պայմանների համեմատ, նախքան պայմանավորված ժամկետն անցնելը, առանց հարգելի պատճառների աշխատանքից հեռանալու դեպքում—բանվոր կամ աշակերտը պարտավոր ե փոխհատուցել ձեռնարկին իր վրա ուսուցման ժամանակ ծախսված գումարը, ընդ վորում այդպիսիների խնդիրը փոխադրվում ե միութենական կազմակերպությունների ի քննություն:

17. Ֆաբգործուսի շրջանավարտներին վարչությունը պարտավորվում ե ոգտագործել մշտական աշխատանքներում ըստ նրանց մասնագիտության:

18. Ֆաբգործուսի աշակերտները պարտավորվում են՝

ա) Ամրացնել աշխատանքային կարգապահությունը.

բ) Բարձրացնել տեսական և գործնական ուսուցման վորակը.

գ) Խնամքով վերաբերվել ցեխի կահույքը մեքենաները, նյութերը և գործիքները.

դ) Մասնակցություն ցույց տալ ձեռնարկի արտադրական կյանքին (ռացիոնալացում և գյուտարարություն).



ե) Անշեղ կիրառել ներքին կարգապահության կանոնները և առաջին հերթին վերջ տալ անհարգելի պատճառներով տեղի ունեցող գործբացակայություններին:

19. Արտադրության մեջ կապված այն դեռահասների համար, վորոնք բրոնյայի մեջ չեն մտնում, վարչությունը պարտավորվում ե յերեք ամսվա ընթացքում իր հաշվին կազմակերպել տեսական պարապմունքներ:

20. Վարչությունը պարտավորվում ե արդֆինպլանով հատկացրած միջոցներով կազմակերպել բանվորական ուժի պատրաստման կարճատև դասընթացներ 30 հոգու համար: Դասընթացների ունկնդիրները պետք ե ապահովված լինեն անհրաժեշտ գրականությամբ և գրական պիտույքներով:

21. Բոլոր այն բանվորները, ծառայողները և ԻՏ. աշխատավորները, վորոնք ավարտելու յեն ձեռնարկի հաշվին վորակավորման և վերավորակավորման դասընթացները, պարտավորվում են աշխատել ձեռնարկության մեջ ուսուցման յուրաքանչյուր ամսվա փոխարեն յերեք ամիս:

22. Այն բանվորների ու ծառայողների համար, վորոնք սովորում են յերեկոյան բանֆակներում, բանվորական ինդուստր-



им. А. Мясникяна
14882-17
128538

խալ տեխնիկումներում, բանվորական հա-
մալսարանում, ինչպես նաև ԲՈՒՀ-երում
նախապատրաստական դասընթացներում
ուսման օրերին սահմանվում է վեց ժամյա
բանվորական օր, պահպանելով գործարանի
հաշվին նրանց միջին աշխատավարձը, աշ-
խատանքի կրճատված ժամկետի համար:

23 · Վարչությունը պարտավորվում է անհրաժեշտ պայմաններ ստեղծել ուսանողական արտադրական պրակտիկան բարեհաջող ձևով օգտագործելու և այդ նպատակով ԻՏ · աշխատակիցներից մեկն ու մեկին, ինչպես նա ձեռնարկի կադրերի բաժնին պատասխանատու դարձնել :

24 · Վարչությունը պարտավորվում է 7-ամյակին կից 1931 թվին ունենալ ուսայց բաժին :

## Դ · ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

25 · Բրոնյան սահմանվում է գործարանի բանվորների ընդհանուր թվի 4 $^{0}/_{0}$-ի չափով :

26 · Բրոնյան պետք է լրացվի մեկ ամսվա ընթացքում բաց վորում առաջին հերթին պետք է ընդունվեն հարվածային բանվորների և գործարանում աշխատանքի յերկար ստաժ ունեցող բանվորների զավակները, ինչպես նաև մանկատների սաները :



27 · Վարչությունը պարտավորվում է 3 ամիսը մեկ անգամ ստուգման յենթարկել ձեռնարկության դեռահասների առկա քանակը ու այդպիսին հասցնել ընդունված նորմային :

28 · Աշակերտներին օգտագործել իրենց ուսուցմանը չվերաբերող աշխատանքներում արգելվում է :

29 · Ծող ու վնասակար ցեխերում և այլ ծանր աշխատանքներում սահմանված տոկոսի հշվին մնում են վերահասները, նրանց բրոնյայի մեջ մտնելու ժամկետը վորոշվում է ուսուցման ժամկետով :

30 · Վարչությունը պարտավորվում է 1931 թվի ընթացքում պահպանել անհատական աշակերտության գոյություն ունեցող սիստեմը :

31 · Աշակերտներին աշխատավարձ է որշվում ըստ նրանց փաստական վորակի, լրիվ տարիֆային գրուպով, կրճատ բանվորական օրվա համար : Աշակերտների վորակը ստուգվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ վարչության և միության ներկայացուցիչներից կազմված վորակավորման հանձնաժողովի միջոցով :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Իբրև էքսպերտներ անհրաժեշտ է հանձնաժո-

ղոմների աշխատանքներին մասնակից անել արտադրական ուսուցման հրահանգիչներին և ձեռնարկի ճարտարագետներին: 39

32. Ձեռնարկությունը վոչ վորակյալ աշխատանքներում գրավված համապատասխան վորակի բանվորական յերիտասարդություն չլինելու դեպքում, վորակյալ բանվորի ազատված տեղերը պետք է հանձնել բանվոր յերիտասարդության—չափահաս բանվորների հետ համահավասար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դեռահաս աշակերտները, վորոնք չափահասների հետ հավասար վորակի աշխատանք են կատարում, պետք է նրանց հետ էլ հավասար վարձատրություն ստանան:

33. Անհատական աշակերտության կից վարպետներին և վորակյալ բանվորներին, անչափահասներին սովորեցնելու համար—լրացուցիչ վճարվում է սովորեցնող վարպետի տարիֆային դրույքի 15 $^0/_0$-չափով, ընդ վորում, սովորեցնողն իրեն հանձնված յուրաքանչյուր աշակերտի համար ստանում է այդ գումարի 50 $^0/_0$-ը, իսկ մնացած գումարը տրվում է նրանց վեց ամիսը լրանալուց հետո և միմիայն այն դեպքում, յեթե աշակերտը հաջող քննություն կտա:



34. Անկախ նրանից թե արդյոք հաստիքային պաշտոն կա թե վոչ, վարչությունը պարտավորվում է թույլ տալ փորձի յենթարկելու չափահաս բանվորներին և յերիտասարդությանը, վորոնք այդ ցանկություն կհայտնեն: Փորձից հետո վարչությունը բանվորին տեղեկանք է տալիս, մատնանշելով նրա մեջ այն, վորակը ու հաջողության կարգը, վորի համար փորձի յե յենթարկվել տվյալ անձնավորությունը, ուրա հետ միասին հերթականության կարգով, ազատված արհեստների համար աշակերտները փոխադրվում են մի կարգից մյուսը:

## Ե. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

35. Վարչությունը պարտավորվում է 1931 թվի արդֆինպլանով աշխատպաշտպանության համար սահմանված գումարներով իրականացնել բանվորների աշխատանքի պայմաններին վերաբերող բոլոր ձեռնարկումները՝ թե անվտանգության տեխնիկայի և թե արդյունաբերական առողջապահության ասպարիզում, համաձայն Աշխժողկոմատի մարմինների կողմից սահմանված ժամկետների:

36. Վարչությունը պարտավորված գոյություն ունեցող բաղնիքը վերանորոգել և կահավորել: Գործարանի ցեխերու ունենալ լվացարաններ, ինչպես նաև յեռացրած ջուր (շոգ ցեխերում յեռացրած ու ապա սառեցրած): Արտահագուստների համար ունենալ պահարաններ ու հանդերձարան, վորը պետք է պատրաստ լինի վոչ ուշ, քան ս/թ ապրիլի 1-ին: Բանվորներին ու աշակերտներին վարչությունը պարտավոր է տալ յուրաքանչյուրին մեկ յերեսսրբիչ (1 մետր 125 սմ.) մեկ տարվա ժամկետով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Բոլոր լվացարաններին կից պետք է ունենալ օճառ, կամ տալ այդպիսին (ըստ սույնին կցըված ցուցակի) բանվորներին առձեռն:
2. Յերեսսրբիչներով բանվորները պարտավոր են օգտվել աշխատանքի վայրում:

37. Վարչությունը պարտավորվում է բոլոր ցեխերում ունենալ դեղարկղներ կարեվոր քանակի դեղորայքով, ինչպես նաև գործարանի կենտրոնական և վտանգավոր մասերում մինչև ս/թ փետրվարի 20-ը ունենալ մեկ կահավորված մահճակալ դըժբախտ դեպքերի համար:



38. Աշխատավորներին ըստ սույնին կըցված ցուցակի արտահագուստ տրամադրել ժամանակին: Արտահագուստը նորից գործածության դնելու համար նախօրոք պետք է ախտահանել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Այն բանվորները, վորոնց արհեստները կցված ցուցակում չեն հիշատակված մասնահագուստ ստանում են Խ. Ս. Հ. Մ.-ում գործող օրենսդրությամբ սահմանված նորմաների հիման վրա:
2 Նոր մասնահագուստ ընդունող հանձնաժողովի մեջ մտնում են միության ներկայացուցիչները:
3. Մասնահագուստի վաղակետ փոխարինումը կատարվում է միայն այն դեպքում, յեթե հաստատված է, վոր նա անպետքացել է արտադրության բնույթի պատճառներով:
4. Մասնահագուստի և կոշիկների մաշվելու ժամկետի մեջ չեն մտնում բանվորի հիվանդության, արձակուրդի և գործադուլների ժամանակը:

39. Սույն պայմանագրին կցված ցուցակի մեջ հիշատակված բանվորներին պետք է աշխատանքի ժամանակ տալ հակաթույներ— համաձայն ընդունված նորմաների:

40. Բանվորները պարտավոր են անշեղ կատարել անվտանգության տեխնիկայի վերաբերյալ բոլոր կանոնները: Արտահագուստը օգտագործել միմիայն աշխատանքի ժամերին և խնամքով վերաբերվել դեպի այդպիսին: Աշխատանքի վայրերում անպայման պահպանել առողջապահական և մաքրության բոլոր կանոնները: Իր ժամանակին վարչությանը տեղեկացնել պահնոր-դական միջոցների նկատմամբ հայտաբերված թերությունների, ինչպես և օդափոխության անկանոնության մասին: Սահմանված կարգի հիման վրա հանձնել պահպանման թե իր հագուստը և թե արտահագուստը ու փաթաթանները:

Արտահագուստը ձեռնարկի սեփականությունն է, ուստի և աշխատանքն ավարտելուն պես պետք է հանձնել վարչության ի պահպանություն: Վարչությունը իր հերթին պարտավոր է կազմակերպել արտահագուստի պահպանման կարգը, լվանալ և կարկատել և անհրաժեշտ դեպքերում և չորացնել այդպիսին. օգտագործման ժամկետն անցնելուց հետո, ինչպես և աշխատանքից հեռանալու կամ արձակվելու դեպքերում արտահագուստը և փաթաթանները պետք է վերադարձնել ձեռնարկին. նոր արտահագուստ չի տրամադրվի նախքան օգտագործածի վերադարձնելը, իսկ յուրացման դեպքում, մեղավորները պարտավոր են փոխահատուցել վարչությանը յուրացրած արտահագուստի արժեքը ըստ շուկայի գների:



41. Վարչությունը պարտավորվում է արդֆինպլանով բնակարանային շինարարության համար հատկացված 400.000 ռուբլին ծախսել՝ բնակելի տների, հանրակացարանների կառուցման և գոյություն ունեցող բնակֆոնդի հիմնական վերանորոգման վրա: Ինչպես նաև փարդործուսի կառուցման համար բաց թողնված միջոցները գումարով 165.000 ռուբլին և նրա կահավորման համար 19.500 ռուբլին լիապես օգտագործել ճիշտ նպատակին:

42. Ձեռնարկներին պատկանող բնակարանների բաշխումը վարչությունը կատարում է գործարկոմների հետ համաձայնեցնելուց հետո, ըստ որում բնակարան ստանալու իրավունքի նախապատվությունն է տրվում բանվորներին, ճարտարատեխնիկական աշխատավորներին, հարվածայիններին և գործարանում զբաղված յերկարատև ստաժ ունեցողներին:

43. Արտադրական նկատառումներով (ռացիոնալացում և այլն) աշխատանքից արձակ-

վող բանվոր-ծառայողները գործարանի պատկանող շենքերից կարող են վտարվել յերեք ամսվա ընթացքում, իսկ աշխատանքային կարգապահության կամ ներքին կարգապահության կանոնադրության խախտման պատճառով արձակվածները կամ թե իրենց ցանկությամբ աշխատանքից հեռացողները — անմիջապես: Սույն հոդվածում հիշատակված արձակումների և վոչ մի դեպքում վարչությունը պարտավոր չի վտարվողին մի այլ բնակարան տրամադրի:

44. Վարչությունը պարտավոր է գործարանի կենտրոնական մասում ճաշարան ունենալ և բանվորներին տաք ճաշ ու նախաճաշ տալու գործը ամենակարճ ժամանակամիջոցում կանոնավորել:

45. Գործարկումները պարտավորվում են բանվորական սիստեմատիկ հսկողություն սահմանել փակ բաշխիչի վրա, ինչպես և հնարավոր ոժանդակություն ցույց տալ կոոպերացիայի սննդի վորակը բարձրացնելու, մթերքների, սննդի և ապրանքների բաշխման բարելավման գործում:

46. Վարչությունը իր վրա յե վերցնում հատկացնել մանկական հրապարակի և մանկապարտեզի կարիքների համար 500 ռուբլի և մեկ սենյակ:



47. Անդրպղինձ Կոմբինատի վարչությունը պարտավորվում է Զանգեզուրի և Ալլահվերդու գործարանների վնասակար ցեխերի բանվորների համար կոմբինատի հաշվին ունենալ սանատորիայում մեկ մահճակալ:

## Զ. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

48. Բանվորների և աշակերտության աշխատավարձը սահմանվում է յուրաքանչյուր արհեստի համար օրավարձի կամ ժամավարձի հաշվով, իսկ ծառայողներին, ճարտարատեխնիկական և ստորին սպասարկող կազմին՝ ամսական դրույքներով:

49. Բանվորների աշխատանքի նորմալ որվա առաջին կարգի տարիֆային դրույքը սահմանվում է մեկ ռուբլի 32 կ.: Մնացյալ կարգերի տարիֆային դրույքները սահմանվում են 8 կարգային տարիֆային ցանցի, հետևյալ գործակիցների՝ համեմատ 1 : 2,8 հարաբերությամբ:

| Կարգ | Գործակից | Դրույք | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Օրվա ռ. կ. | ըստ ժամյա (կոպեկներով) | | |
| | | | 8 ժամյա բանվ. որ | 7 ժամյա բանվ. որ | 6 ժամյա բանվ. որ |
| 1 | 1.00 | 1—32 | 16,50 | 18,85 | 22,00 |
| 2 | 1.20 | 1—58 | 19,75 | 22,57 | 25,97 |
| 3 | 1.45 | 1—91 | 23,87 | 27,28 | 31,83 |
| 4 | 1.70 | 2—24 | 28,00 | 32,00 | 37,33 |
| 5 | 1.95 | 2—57 | 32,12 | 36,71 | 42,83 |
| 6 | 2.20 | 2—90 | 36,25 | 41,42 | 48,33 |
| 7 | 2.50 | 3—30 | 41,25 | 47,14 | 55,00 |
| 8 | 2.80 | 3—70 | 46,25 | 52,85 | 61,67 |

50. *Աշակերտների աշխատանքի նորմալ օրվա առաջին կարգի տարիֆային դրույքը սահմանվում է 80 կոպեկ, մնացյալ կարգերի տարիֆային դրույքը սահմանվում է 4 կարգային տարիֆային ցանցի հետևյալ գործակիցների համեմատ 1 : 1,9 հարաբերությամբ: Վերջին տարվա ուսուցման շըրջանում (5-րդ և 6-րդ խմբակներ) ստանում են աշխատավարձ համաձայն իրենց կատարած աշխատանքների:*



| Կարգ | Գործակից | Դրույք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Օրվա | Ըստ ժամյա | | | | |
| | | | 8 ժամ. բանվ. որ | 7 ժամ. բանվ. որ | 6 ժամ. բանվ. որ | 5 ժամ. բանվ. որ | 4 ժամ բանվ. որ |
| 1 | 1,00 | —80 | —10 | 11.4 | 13,6 | 16— | 20— |
| 2 | 1,20 | —96 | —12 | 13,7 | 16— | 19.2 | 24— |
| 3 | 1,50 | 1—20 | —15 | 17,1 | 20— | 24— | 30— |
| 4 | 1,90 | 1—52 | —19 | 21,7 | 25,3 | 30,4 | 38— |

51. *Հաշվա-դրասենյակային և տնտեսական կարգի ծառայողների առաջին կարգի ամսական դրույքը ամսվա բոլոր օրացուցային օրերի համեմատ սահմանվում է 39 ռուբլի: Մնացյալ կարգերի տարիֆային դրույքները սահմանվում են 16 կարգային տարիֆային ցանցի հետևյալ գործակիցների համեմատ 1 : 8 հարաբերությամբ:*

| Կարգ | Գործակից | Դրույք |
|---|---|---|
| 1 | 1,0 | 39—00 |
| 2 | 1,2 | 46—80 |
| 3 | 1,4 | 54—60 |
| 4 | 1.7 | 66—30 |
| 5 | 2,0 | 78—70 |

| Կարգ | Գործակիր | Դրույք |
|---|---|---|
| 6 | 2.3 | 89—70 |
| 7 | 2.7 | 105—30 |
| 8 | 3.1 | 120—90 |
| 9 | 3.5 | 136—50 |
| 10 | 4.0 | 156—00 |
| 11 | 4.5 | 175—50 |
| 12 | 5.0 | 195—00 |
| 13 | 5.6 | 218—40 |
| 14 | 6.3 | 245—70 |
| 15 | 7.1 | 276—90 |
| 16 | 8.0 | 312—00 |

52. Ճարտարագիտական–տեխնիկական կազմի առաջին կարգի ամսական դրույքը ամսվա բոլոր օրացուցային օրերի համար սահմանվում է 90 ռուբլի: Մնացյալ կարգերի տարիֆային դրույքները սահմանվում են 16 կարգային տարիֆային ցանցի հետևյալ գործակիցների համեմատ 1 : 4 հարաբերությամբ:



| Կարգ | Գործակից | Դրույք |
|---|---|---|
| 1 | 1,00 | 90— |
| 2 | 1,10 | 99— |
| 3 | 1,20 | 108— |
| 4 | 1,30 | 117— |
| 5 | 1,40 | 126— |
| 6 | 1,55 | 139—5 |
| 7 | 1,70 | 153— |
| 8 | 1,85 | 166—50 |
| 9 | 2,00 | 180— |
| 10 | 2,20 | 198— |
| 11 | 2,40 | 216— |
| 12 | 2,60 | 234— |
| 13 | 2,85 | 256—50 |
| 14 | 3,15 | 283 50 |
| 15 | 3,50 | 315— |
| 16 | 4,00 | 369— |

53. Բանվորների, ծառայողների, ճարտարա–տեխնիկական և ստորին սպասարկող կազմի աշխատանքների և արհեստների ստո–րաբաժանումը կատարվում է Խ. Ս. Հ. Մ. մետաղագործների միության կենտկոմի

կողմից 1928 թվին հրատարակված տարիֆային տեղեկատուների համաձայն:

54. Չորս կարգային տարիֆային ցանցով վարձատրվող աշակերտությունը չի թույլատրվում զբաղեցնել գործարքային աշխատանքներում:

Չորս կարգային տարիֆային ցանցն անցած աշակերտները համապատասխան յեղանակով փորձի յեն յենթարկվում, վարձատրվում բանվորական տարիֆային ցանցի 3-րդ կարգից սկսած:

55. Կրտսեր սպասարկող անձնակազմը փոխադրվում է ամսական կայուն դրույքների և դուրս են բերվում տարիֆային ցանցերից, ՄՈՊ-ի դրույքի չափը սահմանվում է առանձին պաշտոնների ամսական միջին աշխատավարձի հաշվարկումից, (մտցնելով սիստեմատիկաբար գերարտադրումի, գիշերային և այլ վճարները, յեթ այդպիսիք տեղի յեն ունեցել): Մատնանշած սիստեմի մտցնելու պահից կայուն դրույքները փոխարեք տեղի ունեցած սիստեմատիկ լրացուցիչ վճարները առանձին չեն վճարվում:

56. Ամսական միջին աշխատավարձը և վոչ լրիվ ամսական աշխատավարձի հաշվարկման կարգը ամեն տեղ, ուր այդ մասին խոսվում է, ընդունվում է Ա. Խ. Հ. Մ. Աշխժողկոմատի կողմից հրատարակված վորոշումների հիման վրա:



57. Աշխատավարձը տրվում է ամսական յերեք անգամ՝ հետևյալ ժամկետներում, վոչ ուշ քան յուրաքանչյուր ամսի 20-ից, աշխատավորի ամսական տարիֆային դրույքի 40 %-ի չափով, վոչ ուշ քան յուրաքանչյուր ամսի 30-ից աշխատավորի ամսական տարիֆային դրույքի 30%-ը և վոչ ուշ քան հաջորդ ամսվա 10-ից կատարվում է վերջնական հաշվարկ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Վճարումների սկիզբը սահմանվում է՝ 1-ին վճարումը— ամսի 18-20 ներառյալ. 2-րդ վճարումը 28-30 ներառյալ, վերջնական հաշվարկի հաջորդ ամսի 8-10 ներառյալ:

2. Յեթե նախնական վճարումների հաշվետու պահին աշխատավորը աշխատած լինի ավելի քիչ ժամանակ քան պետք եր կանխավճարի ստանալու համար, այդ դեպքում նրան տրվում է նրա փաստացի աշխատած ժամանակի համար:

3. Վարչությունը պարտավոր է աշխատավարձի վճարումները կատարել ցեխերում աշխատանքի ժամերին:

## Է. ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՈՒՄԸ

58. Գործարքային գնահատումները ս(ահ)մանվում են բացառապես ըստ աշխատ(անքի) կարգերի, այլ ոչ թե աշխատանքը կա(տա)րողի, և բոլորովին անկախ տվյալ կա(տա)գործող բանվորների բանվորական (ս)տեվողությունից, այլ և աշխատանքի (կա)տարման ժամանակից (ցերեկը, գիշ(երը,) տոն օրերին, արտաժամյա):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն ժամա(նա)կը, որ ծախսվում է ըստ աշխատ(ան)քի բնույթի պահանջվող պարագան(երի) պատրաստման համար, հաշվի չի առ(ն)վում գործարքային գնահատումներ ս(ահ)մանելիս, նշանակվում է պատվերա(...) մեջ և հատուկ վարձատրման ենթա(կա) չէ: Պարագաներ պատրաստելու համ(ար) ծախսված ժամանակը, որը ըստ իր (...)յության չէր կարող նախատեսվել և (...)մանել գործարքային գնահատման (...) վարձատրվում է հատուկ համաձայն(ու)թյամբ:

59. Ջափավորման ենթարկվող բոլոր (աշ)խատանքներում գործադրվում են աշխ(ա)տանքի վարձահատուցման հետևյալ սիստ(եմ)ները՝ ուղիղ անսահմանափակ գործարքային պարգևավային վարձատրումն— աշխատանքի ընթացքում բանվորների կողմից ձեռք բերված զանազան տեսակի նվաճումների համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Աշխատանքի վարձատրման պարգևավային բոլոր սիստեմները մշակվում են վարչության և հաստատվում Գ. Կ. Հ.-ի կողմից: 2. Աշխատանքի հրահանգային ձևերի գործադրման դեպքերում սահմանվում են աշխատանքի վարձատրման (Ֆիքսիրովանիյա) ամուր սիստեմներ և հաստատվում Գ. Կ. Հ.-ի կողմից:

60. Գործարքային գնահատումները չեն փոխվում ըստ տվյալ աշխատանք կատարող բանվորների որակի, հետևաբար բանվորներին աշխատանք պետք է տրվի միմիայն ըստ իրենց մասնագիտության, բացառությամբ զաղարի դեպքերի: Հետին թվով ավելիրադիր տալը չի թույլատրվում:

61. Սխալ սահմանված մշակման նորմաների և գործարքային գնահատումների դեմ բանվորների բողոքը քննում է Գ. Կ. Հ.-ն: Մինչև նրանց Գ. Կ. Հ.-ում քննվելը, բանվորը չի կարող հրաժարվել իրեն հանձնարարված աշխատանքից, չնայած նույնիսկ նա

համաձայնություն չի տվել հայտարարված գնահատմանը, կամ մշակման նորմային կոնֆլիկտի շրջանում բանվորը վարձատրըվում են Գ. Կ. Հ.-ի սահմանած գնահատմամբ:

62. Գործարքային գնահատումները վորոշում են տարիֆային դրույքի սահմանած մեկ որյա մշակման նորմայի վրա բաժանելով, կամ ըստ ժամյա տարիֆային դրույքը տվյալ աշխատանքը կատարելու համար, վորպես նորմա, սահմանված ժամերի քանակի վրա բազմապատկելու միջոցով:

63. Յերկարատև աշխատանքներ կատարելու դեպքում վերջնական գործարքային հաշվարկը կատարվում է աշխատանքներն ավարտվելուց հետո, ըստ վորում մյուս բանվորներին ամսական աշխատավարձի վըճարումի հետ միաժամանակ աշխատողին կանխավճար է տրվում տվյալ ամսվա ընթացքում կատարած աշխատանքի տոկոսի համապատասխան չափով, բայց վոչ պակաս տարիֆային դրույքից: Վերջնական հաշվարկը կատարելիս, աշխատավարձի գումարից պահվում են բոլոր կանխավճարումները և պարբերական վճարումները: Յեթե կանխավճարի գումարը արվելիք աշխատա-



վարձից ավելի կլինի, այդ դեպքում բոլոր ավելորդ վճարածը պահվում է հետագա աշխատավարձից այն հաշվով, վորպեսզի տըրվող գումարը տարիֆային դրույքի յերկու յերրորդականից պակաս չլինի:

64. Առանց հարգելի պատճառների, աշխատանքը սկսելուց հետո պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում, աշխատողին վճարվում է, նույն պատվերը ավարտելու համար վճարված գումարի միջև յեղած տարբերությունը, բայց աշխատողի տարիֆային դրույքից վոչ պակաս:

65. Յեթե գործարքային աշխատանքից անկախ պատճառներով (մահ, հիվանդություն, պետական, արհեստակցական աշխատանքի կանչելը), կամ վարչության կարգադրությամբ վորևէ պատվերը կմնա անավարտ, ապա պատվերի ավարտված մասը վարձատրվում է դրա վրա փաստորեն ծախսված ժամանակի համար, ըստ միջին աշխատավարձի:

66. Բանվորներն այդ աշխատանքների ուղարկվելու դեպքում, յեթե վերջինները նըրանց պարտականությունների մեջ չեն մըտնում, այդ աշխատանքները կատարելու ժամանակաշրջանի համար (բայց վոչ ավելի յերկու ամսից) վարձատրվում են նույն աշ-

խատանքներով զբաղվածների դրույքով— բայց իր միջին աշխատավարձից վոչ պակաս չափով:

67. Գոյություն ունեցող գործարքային գնահատումները անփոփոխ են մնում մինչև նրանց ծրագրային ձևով վերանայելը, բացառությամբ ակնհայտ սխալ գնահատումների և այնպիսի աշխատանքների, ուր սահմանվում են առավելագույն տեխնիկապես հնարավոր մշակման նորմաները վերջինների գործարքային գնահատումները բարձրացվում են պայմանագիրը ուժի մեջ դնելու օրից այն դեպքում, յեթե այդ աշխատանքներում փաստացի աշխատավարձը գործարքային ժամի նոր սահմանված հաշվարկային արժեքից ավելի նվազ է:

68. Գործարքային աշխատող վորակյալ բանվորներին սպասարկող սեվագործների համար սահմանվում է հավելյալ վարձահատուցում առաջինների գործարքային գնահատման գերազանցման տոկոսի 0,6-ի չափով սեվագործի տարիֆային դրույքից:

## Ը. ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿՅԱ ՎԱՐՁԱՀԱՏՈՒՑՈՒՄՆ

69. Աշխատանքի ըստ ժամանակի վարձահատուցումն թույլատրվում է միմիայն չափավորման դժվար յենթարկվող աշխատան-



քի նկատմամբ: Այն բանվորները, վորոնք մշտապես գործարքով են աշխատում և միմիայն ժամանակավորապես են չափավորման դժվար յենթարկվող (յեզակի գնահատումներով) աշխատանք կատարում, այդ ժամանակաշրջանի համար վարձատրություն են ստանում կատարած աշխատանքների համեմատ, բայց վոչ պակաս նախորդ շրջանում գործարքային աշխատանքների համար ստացած նրանց միջին աշխատավարձի չափից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մշտապես գործարքային աշխատողներ են համարվում նրանք, ովքեր տվյալ ամսվա օրացուցային ժամանակամիջոցի վոչ պակաս քան 65 տոկոսը զբաղված են յեղել նման աշխատանքներով:

70. Ըստ ժամանակյա վարձատրվող այն աշխատողներին, վորոնց աշխատանքը դժվար է յենթարկվում չափավորման, կարող է պարգևներ (պրեմիա) նշանակվել, արտադրական նվաճումների համար—ինչպես կատարվող աշխատանքների լարվածության նույնպես և նյութերի, վառելիքի խնայողության, դադարների ու խոտանի նվազեցման իմաստով: Նմանապես պարգևներ կարող են նշանակել այն բանվորներին, վորոնք

սպասարկում են գործարքային աշխատողներին, ըստ նշված ֆակտորների, վորոնք պարգեվատրվողների ազդեցության տակ են գտնվում:

Պարգևների չափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ և հաստատվում է Գ. Կ. Հ.-ի միջոցով:

71. Աշխատանքի ժամերին այն բանվորների համար, վորոնք ըստ ժամանակյա վարձատրություն են ստանում, հաշվվում է գործուղղման պահից, ընդվորում, աշխատանքի տեղը գալու համար ծախսված ժամանակը ճշտիվ վորոշվում է կողմերի համաձայնությամբ և մտցվում է աշխատանքի ժամերի մեջ:

72. Արտաժամյա աշխատանքներ կատարվում են վարչության գրավոր կարգադրությամբ: Վերջինիս բացակայության դեպքում բանվորը իրավունք ունի հրաժարվելու արտաժամյա աշխատանքներից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ի լրումն աշխ. օրենսգրքի 60, 103 և 109 հոդվածների սահմանվում է՝ արտաժամյա աշխատանքների հատուցումն ազատ որով չի թույլատրվում:

73. Գործարքով աշխատողներին և ըստ ժամանակի աշխատող ու պարգև ստացող



բանվորներին, արտաժամյա աշխատանքներ կատարելու համար վարձատրություն է տրվում հետևյալ ձևով՝ գործարքային աշխատավարձի կամ աշխատավարձի պարգևի հետ միասին միացվում է հավելում—առաջին յերկու ժամվա ընթացքում— յուրաքանչյուր աշխատած ժամի համար կես ժամվա տարիֆային դրույքի, իսկ հետագա ժամերից յուրաքանչյուրի այլ հանգստի ու տոն որերի աշխատած յուրաքանչյուր ժամի համար— մեկ ժամյա տարիֆային դրույքի չափով:

74. Դադարներն արտադրության մեջ, վորոնք առաջացել են արտադրական պատճառներով ու անկախ աշխատավորների կամքից վոչ ավելի քան յերեք որ տևողությամբ, վարձատրվում են միջին աշխատավարձի չափով. ձեռնարկության ցեխային կամ նրա մի մասի աշխատանքն յերեք որից ավելի և մինչև մեկ ամիս դադարելու դեպքում, բանվորները դադարի ժամանակաշրջանի համար վարձատրություն են ստանում ըստ տարիֆային դրույքի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Սույն հոդվածի յերկրորդ մասում նշված վարձատրությունը դադարի առաջին որվանից սկսած տարիֆային դրույքով

տրվում է միմիայն այն դեպքում, յեթե բանվորներին չեն ոգտագործել այլ աշխատանքներում ու բոլորովին առանց գործի յեն մնացել:

2. Վարչությունը իրավունք ունի սույն հոդվածում նշված բանվորներին դադարի ժամանակ ոգտագործելու ուրիշ աշխատանքներում, ըստ վորում վարձատրությունը տրվում է մինչև յերկու շաբաթ միջին աշխատավարձի չափով, իսկ յերկու շաբաթից հետո— տարիֆային դրույքով, կամ հատուկ գնահատամամբ (Աշխ. Որ. 64-րդ հոդ.): Այլ աշխատանքներ կատարելուց հրաժարվողները կարող են արձակվել համաձայն Աշխ. օրենսգրքի 36 և 88 հոդվածների:

3. Բանվորները պարտավոր են հենց դադարի սկսելուն պես տեղեկացնել այդ մասին վարչությանը, հակառակ դեպքում դադարը չի վարձատրվում:

4. Վարձատրություն տրվում է միմիայն բանվորական որերի համար այն աշխատավորներին, վորոնք սահմանված ժամերին ներկայացել են նշանաման համար դադարի որերին:

5. Դադարներն ընդհանուր առմամբ



մինչև 20 րոպե որվա ընթացքում չեն վարձատրվում:

75. Մշակման նոր նորմաներ և գնահատումներ սահմանելիս տեխնիկապես անխուսափելի դադարները (հատուկ ցուցակի մեջ նշված), նայած արտադրության բնույթին, նախորոք հաշվի յեն առնվում և մտցվում գնահատումների մեջ: Նման դադարների համար հատուկ վարձատրություն չի տըրվում:

76. Բանվորների մեղքով առաջացած դադարների համար վարձատրություն չի տըրվում: Նման դադարների ցուցակը կազմվում է վարչության և միության կողմից ու կախվում ցեխերի նկատելի տեղերում:

77. Այն դեպքերում, յերբ դադարը տեղի յե ունենում աշխատավորների, կամ աշխատավորների խմբակի անփույթ վերաբերմունքի հետևանքով, կամ թե ներքին կարգապահության կանոնների խախտելու, վարչության կարգադրությունները չկատարելու, ինչպես և աշխատավորների կողմից դիտավորյալ կերպով վարչության հանձնարարությունները անկատար թողնելու կամ խախտելու հետևանքով— մեղավորները վտարվում են ձեռնարկությունից առանց արձակման նպաստի:

78. Վարչությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել կանխելու սպառնող դադարը, իսկ յեթե դադարը անխուսափելի յե, ապա պարապ մնացող բանվորներին օգտագործել այլ աշխատանքներում:

Վարչության անփութության պատճառով տեղի ունեցած դադարների համար մեղավորները պատասխանատվության են յենթարկվում, համաձայն գործող պատժացուցակի և միաժամանակ փոխհատուցում են ձեռնարկին հասցրած նյութական վնասը:

## Թ. ԽՈՏԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

79. Խոտանը, վոր առաջացել է բանվորի մեղքով, վարձատրության յենթակա չէ: Յեթե խոտանը առաջացել է վարչա-տեխնիկական կազմի մեղքով չարունակ կրկնվող աշխատանքներում, ուր աշխատանքի պրոցեսը մեխանիզմային բնորոշված է,— այդ դեպքում վարչա-տեխնիկական կազմը կրում է օրենքով նախատեսված տուժ (Խ. Ս. Հ. Մ. Աշխժողկոմատի 1931 թվի վորոշման § 28):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — 1. Այն դեպքում, յերբ խոտանը կառաջանա ռացիոնալացման ձեռնարկումների հետ կապված և արտադրական ռիսկ պահանջող



աշխատանքներում, վարչա-տեխնիկական կազմը պատասխանատվության յենթակա չէ:

2. Այն դեպքում, յեթե բանվորի մեղքով խոտանի արտադրանքը հետագայում օգտագործվի ձեռնարկի մեջ, վոր վորպես պիտանի, այդ արտադրանքը վարձատրվում է իջեցրած գներով, վորպիսին սահմանում է Գ. Կ. Հ.-ն:

80. Յեթե խոտանը տեղի յե ունեցել վոչ բանվորի մեղքով և վերջինիս կողմից կանխված են խոտան առաջ բերող բոլոր պատճառները (անհապաղ հայտնելով աշխատանքի ղեկավարին հումույթի ու նյութերի ցածր վորակի, անհրաժեշտ պայմանների բացակայության մասին) բանվորը վարձատրվում է լրիվ գնահատումներով:

81. Յեթե խոտանի հայտաբերման դեպքում բանվորը չհայտնի ցեխի վարչությանը և չարունակի արտադրել խոտան վերջինիս վրա ծախսված ժամանակի համար բանվորը չպետք է վարձատրվի:

## Ժ. ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

82. Մշակման նորմաները սահմանվում են՝ առավելագույն տեխնիկապես հնարավոր—յելնելով տեխնիկական անհրաժեշտ կահավորման առավելագույն օգտագործու-

մից, հարվածային արժանի բանվորի բանվ
րական օրվա լրիվ բեռնավորումից ու ն
աշխատանքի լարվածությունից—աշխատա
քի առանձին արհեստների համար սահմա
ված աշխատանքի ժամերի համեմատ, ը
վորում աշխատավորը ըստ իր վորակի պե
ե համապատասխանի ավյալ աշխատանքի

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մշտական նո
մաները, կրճատ բանվորական որ ուն
ցող աշխատավորների համար սահմա
վում են նորմալ բանվորական օրվ
նորմաների համեմատ, իջեցրած նրա
բանվորական օրվա հարաբերությամ

83. Պայմանագրում նախատեսված ա
խատավարձով բանվորը պարտավորվում
լրիվ կատարել սահմանված մշտական նո
մաները, ըստ վորում, կատարված աշխա
տանքը պիտի համապատասխանի տեխնիկ
կան պահանջներին:

Սահմանված մշակման նորմաները, ա
խատանքի նորմալ պայմաններում իր մե
քով չկատարելու դեպքում, բանվորն աշ
ջին անգամ աշխատավարձն ստանում է լ
կատարած աշխատանքի քանակի համեմատ
բայց համենայն դեպս վոչ պակաս յուր տա
րիֆային դրույքի 2/3-ական մասից:



Երկրորդ անգամ— իջեցում ստորին
րդի և յերրորդ՝ արձակում: Բոլոր դեպ-
րում էլ Գ. Կ. Հ.-ի վորոշմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արտադրական բնույթի պատճառներով մշակման նորմաները չկատարելու դեպքում (նյութերի վոչ համապատասխան վորակը, իր ժամանակին նյութերն աշխատանքի վայրը չհասցնելը, գործիքների վատ վորակը) բանվորներին վերապահվում է միջին աշխատավարձը:

84. Մշակման բոլոր առավելագույն տեխ-
նիկապես հնարավոր նորմաները, վորոնք
յտաբերված են զուտ գիտական ձևվե-
մ՝ խրոնոմետրաժի և բանվորական օրվա
սանկարման միջոցով, հաշվի առնելով
ե ռացիոնալիստական բնույթի բոլոր
այմաններն ու հնարավորությունները,—
նստատվում են Գ. Կ. Հ-ի կողմից հաս-
տատելու օրից մեկ տարվա ժամկետով:

85. Արդֆինպլանով 1931 թվի նկատմամբ
հմանված է՝

Արտադրողականության ու աշխատավար-
բարձրացման և ինքնարժեքի իջեցման
պլանների պահպանման, ձեռնարկու-
ան սահմաններում աշխատավարձի կար-
վորումը կիրառելու, ինչպես և արդֆին-

պլանից բխող, 1931 թվի արտադրական ծրագրի անշեղ ու լիակատար կենսագործման ապահովելու նպատակով յերկու կողմերը պարտավորվում են մինչև սույն թվի Մարտի 20-ը վերանայել մշակման գոյություն ունեցող բոլոր նորմաները, ըստ վորում այդ վերանայումն պետք է կատարվի յուրաքանչյուր ձեռնարկի վարչության ու գործարկոմի հատուկ համաձայնագրով սահմանած ծրագրային յեղանակով. Նշված համաձայնագիրը պետք է ստորագրվի վոչ ուշ, քան ս. թ. փետրվարի 20-ը:

86. Վերանայված մշակման բոլոր նորմաները և գործարքային բոլոր գնահատումները կենսագործվում են մեկ տարվա ժամկետով: Մինչև ժամկետի լրանալը վերանայել մշակման նորմաները գնահատումները կարելի յե միմիայն այն դեպքում, յեթե տեխնիկական չափավորման միջոցով կհայտաբերվի գոյություն ունեցող նորմաների սխալ լինելը, ինչպես և այն դեպքում, յերբ նորմաների գործողության ժամկետի ընթացքում կկիրառվի կազմակերպչական կամ տեխնիկական այնպիսի բարեփոխություններ, վորոնք բանվորների արտադրանքը կավելացնեն:

87. Մշակման նորմաները կարելի յե վերանայել ինչպես տեխնիկական չափավորման մեթոդների և արտադրության պրոցեսների մանրամասն ուսումնասիրության (խրոնոմետրաժ, բանվորական օրվա լուսանկարում և այլն), նույնպես և փորձնական տվյալների հիման վրա:



88. Նորմաների և գնահատումների վերանայման հետևանքով առաջացած ամբողջ տնտեսումն լրիվին անցնում է ինքնարժեքի իջեցմանը:

89. Նոր աշխատանքների և արտադրության նորմաները սահմանվում են փորձի միջոցով, աշխատանքի ընթացքում վորից հետո վերջնականապես վորոշվում և ընդունվում է մեկ տարվա ժամկետով:

90. Ցպակի հազվագյուտ դեպքում կատարվող աշխատանքների մշակման նորմաները և գործարքային գնահատումները բանվորներին պետք է անպայմանորեն հաղորդվեն մինչև տվյալ աշխատանքի սկիզբը, գրանցելով գործարքային քարտերի, պատվիրագրերի կամ ձեռնարկության մեջ ընդունված՝ աշխատանքի հաշվառման այլ ձևերի մեջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1.— գնահատումները հաղորդվում են բանվորներին ամսական յերկու անգամ:

2. Տվյալ աշխատանքի նկատմամբ մշտական գնահատում ունենալու դեպքում պատվիրագիր տալը պարտադիր չէ:

91. Մշակման նորմաները սահմանվում են վարչության կողմից և կախվում ձեռնարկության մի վորևէ նկատելի տեղում բանվորներին նրանց հետ ծանոթացնելու: Միաժամանակ ներկայացվում է Գ. Կ.-ի հաստատության, վորից հետո կիրառվում է կյանքում:

92. Մշակման նորմաների և գործարքային գնահատումների վերանայման աշխատանքները պետք է կատարվեն սիստեմատիկաբար և ծրագրային յեղանակով, ամբողջ տարվա ընթացքում:

